

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ ԱՐԵՎՄՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
(XIX դար—XX դարի սկիզբ)*

Պատմ. գիտ. դոկտոր Ա. Ս. ՀԱՄԲԱՐՅԱՆ

Կանոն—օրենք, կարգ:

Կանոննամա—օրենսգիրք, օրենքների ժողովածու:

Կապուռնեմի-արար.—մաքս, որ գանձվում է դարպասների մոտ՝ վաճառքի համար քաղաք բերվող մթերքներից⁷⁸:

Կառ-պարսկ.—եկամուտ, շահույթ, օգուտ, ֆեոդալական բնամթերային ռենտա 1912 թ. թղթակից Ջալալը գրում էր, որ Վասպուրականում «վերջերս բեկերը ուշար կվերցնեն նաև լեռներու խոտերեն, որոնք կառ, բոջ, քսիք կկոշվին»⁷⁹:

Կեֆալեա կամ ֆեֆալեա-արար.—երաշխավորություն, ապահովություն, հանձնարարական

Կըշակ—սե՛ս դշլաղ:

Կըռա կամ կուռա-քրդ.—խեղճ պատանի, գյուղացի:

Կոն-քրդ.—վրան⁸⁰:

Կոնաֆ—կառավարական շենք, պետական հիմնարկություն, իջևան:

Կուշան-արար.—Թուրքիայում գոյություն ունեցող կարգի համաձայն, եթե մեկը ցանկանում էր հող ձեռք բերել, դիմում էր իշխանություններին, որոնք իրենց ստորադրյալներին հանձնարարում էին հատկացնել այն՝ որոշելով տարածքն ու մուծվելիք գումարը: Այդ գումարը պետական դրամարկով մուծելուց հետո նրան տալիս էին կոշան, որը պայմանագրի նախնական ձևն էր: Այն կազմվում էր երեք օրինակից, որոնցից մեկը տրվում էր դիմողին, երկրորդը մնում էր սանջակի մեջլիսում, իսկ երրորդը ուղարկվում էր Կ. Պոլիս ե հաստատվում կամ մերժվում բարձրագույն իշխանությունների կողմից: Հաստատման դեպքում դիմողին տրվում էր Թափա, որը պայմանագրի ավարտված ձևն էր⁸¹:

Հաթթը-հումայուն, Հաթթը-շերիֆ—տե՛ս թանգիմաթ:

Հալա-քրդ.—հիմա, առայժմ: Տուրքի մի տեսակ էր, որը գյուղացին վճարում էր քույր աղային իր ամուսնացող աղջկա գլխագնից՝ սովորաբար կեսը⁸²:

Հակկը—կաբար-արար.—հակկը նշանակում է իրավունք, ճշմարտություն, արդարություն, պարգևատրում, բաժին, մաս, իսկ կարար՝ որոշում, կայունություն, հանգիստ⁸³: Որոշ վայրերում այդպես էր կոչվում այն փաստաթուղթը, որով հոր անունով ձեռնկերպված թափուն վերաձեռնկերպվում էր որդու անունով:

Հակկը շահադեբեհամե-արար., պարսկ.—իրավունքի վկայագիր:

Հակկը—յուլ—հաֆիմե-արար.—ըստ Ատրպետի, քրդական աշիրեթները, որոնք ենթարկվում էին Քյոո Հուսեինին, վճարում էին նրան հակկը—յուլ—հաթիմե տուրք, որ նշանակում է կառավարողի կամ տիրողի իրավունք⁸⁴:

* Սկիզբը տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1992, № 2—3:

⁷⁸ А. С. Тверитинова. Указ. соч., с. 203.

⁷⁹ «Աշխատանք», 1912, № 12—59, էջ 8:

⁸⁰ Տե՛ս Գեղամ Տեր-Կարապետյան. նշվ. աշխ., էջ 322:

⁸¹ Տե՛ս Ա. Ս. Համբարյան. Ազրաբային հարաբերությունները..., էջ 51:

⁸² Տե՛ս Հ. Մ. Պողոսյան. Սասունի պատմություն. Երևան, 1985, էջ 205:

⁸³ Турецко-русский словарь, с. 226—317.

⁸⁴ Տե՛ս Ատրպետ. Ճիվաղը, Քյոո Հուսեին փաշա-քուրդը. 1911, Թիֆլիս, էջ 4—5, 14:

Համփա-շարեֆ—համփա-պարսկ՝ բաժին, մաս, համատեր, տիրակից կամ պարզապես համայնքի անդամ, իսկ շարեֆ՝ թաթար. քառորդ⁸⁵։ Հայաստանում համայնական հողերի վերաբաժանումների ժամանակ վարելահողերը բաժանվում էին համփա, շարեֆ, կիսան և պճեղ մասերի։ Ամենաբազմանդամ ընտանիքը, ու բաղկացած էր, օրինակ, 16 հոգուց, ստանում էր համփա, այսինքն՝ ամենամեծ հողաբաժինը, 8 հոգուց բաղկացած ընտանիքը ստանում էր կիսան, 4 հոգուց բաղկացած ընտանիքը՝ շարեֆ, իսկ 2 հոգուց բաղկացած ընտանիքը՝ պճեղ հողամասեր։ Վարելահողերի վերաբաժանման համփա-շարեֆ սկզբունքը գործածվում էր ինչպես Արևելյան, այնպես էլ Արևմտյան Հայաստանում, բայց ավելի շատ Արևելյան Հայաստանում։

Հառաքար կամ հասար-արար.—վնաս, կոռուստ։ Տալվորիկի. Բուլանդիի և Ենուսի գյուղացիները գանգատվելով Քյոո Սլուից, որում էին, որ 1912 թի դուր Վալարաշոր է 500—1000 դուրաշ խասաքաթ ըսված տուրքը մճաբեմ⁸⁶։ Թեթե, Եսվեթ, ավելին չի հաղորդում այդ տուրքի մասին։

Հալալե-արար.—հանձնարարություն, վստահություն, հանձնում, վճարման փոխադրություն (պարտապանի կողմից այլ մարդու), պարտքի փոխադրություն⁸⁷։ Թուրք սպառնչությաները իրենց ոռճիկի փոխադրեն վերցնում էին հավալե կողմած փաստաթուղթը, ապացուցելու համար, որ պետությունից ոռճիկ չեն ստացել և գյուղացիներից հավաքում էին իրենց ոռճիկի կրկնակին ու եռակին⁸⁸։ Պա մշտապես էլրաբում էր Արևմտյան Հայաստանում։

Հյուրյուրեք կամ հյուրյուրեքալուր-արար.—քրդական ու արաբական ցեղապետների կամ բնիկի տիրություն։ Դրանց տիրակալները օգտվում էին լիակատար ինքնուրույնությունից ինչպես զինվորական, այնպես էլ քաղաքացիական-վարչական դործերում, սուլթանի առաջ կատարում էին ոռդմալահենային ծառայություն, պահանջի գեպըում ներկայանալով արշավանքի և զեկավարելով իրենց զորքերը⁸⁹։ XIV—XVII դդ. հյուրյուրեքություններ եղել են վանի, Դիաբեհլի, Բիթլիսի և այլ էյալեթներում։ XVII դարի թուրք ոռդեկիր էլլիա Չելեբին նշում է, որ հյուրյուրեքություններում թիմարներ և զլամաթներ չկային։ Վերանց իշխողները այդ կալվածները կառավարում էին որպես իրենց սեփականություն։ Տներն ու բերքը պատկանում էին իշխողներին⁹⁰։ Մասնազետները գտնում են, որ հյուրյուրեքությունները Օսմանյան կայսրության մեջ եղել են կիսանկախ վիճակում⁹¹։ Արևմտյան Հայաստանում հյուրյուրեքությունները վերացվեցին XIX դարի առաջին կեսին։

Հուրիեք-անգարյա-արար.—նշանակում է աղատություն և հարկադիր աշխատանք։ 1908 թ. հեշադդումից հետո երիտթուրքական իշխանությունները Արևմտյան Հայաստանում սկսեցին հավաքել նաև նոր հարկեր, որոնցից մեկն էլ կոչվում էր հուրիեք-անգարյա։ 1910 թ. սեպտեմբերին Չարսանջակի 7 քահանաներ և Պոլսի հայոց պատրիարքին հրում էին, որ սահմանադրության հոդվածից հետո արևմտահայության դրությունն ավելի վատթարացավ. «Ավելի սուր հանգամանքով մը սկսած են իրադործվիլ՝ ի հեճուկս սահմանադրության, և մինչև իսկ (ինչ որ չէր տեսնված հին ոռժիկի ժամանակ) մեր երեցիները կրոնադատվին ձրի աշխատության, զոր հուրիեք-անգարյանը կանվանեն այս անգութ բռնավորները, բաղադատորեն ընդոտնելու համար սահմանադրությունը, որ փորի ցավ կպատճառե իրենց»⁹²։

⁸⁵ С. А. Егпазаров. Исследование по истории учреждений в Закавказье. Ч. I, сельская община. Казань, 1902, с. 51.

⁸⁶ «Բյուղանդիկ», 1911, № 4436.

⁸⁷ Турецко-русский словарь, с. 238.

⁸⁸ Տե՛ս Մ. և Ս. Բ դ ե յ ա ն. նշվ. աշխ., էջ 238.

⁸⁹ А. С. Тверитинова. Указ. соч., с. 219.

⁹⁰ Բուրքական աղբյուրներ..., հ. Բ, էջ 265.

⁹¹ Նույն տեղում, էջ 265—266.

⁹² «Մշակ», 1010, № 216: «Ժամանակ», 0 սեպտեմբերի 1910: «Բյուղանդիկ», 1910, № 4329.

Ղևերա—«Բյուզանդիոնը» գրում էր, թե դա ձրի աշխատանք էր, որ կատարում էին Ալշավազի գյուղացիները Կեոռ Հուսեինի օգտին⁹³։ Ցավոք, չի տալիս այլ տեղեկություններ։

Ղշլաղ-թուրք.—ձմեռանոց։ Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում հայ գյուղացիներն ընկած էին քուրդ տղաների կամ ցեղապետների իշխանության տակ։ Սրանց ցեղակիցները, վարելով կիսաքոչվորական կյանք, գարնանը բարձրանում էին սարերը, իսկ ձմեռնամուտին գալիս հաստատվում էին հայկական գյուղերում։ Ցեղապետները կամ աղաները իրենց ցեղակիցներին բնակեցնում էին իրենց տիրապետության տակ ընկած հայ գյուղացիների տներում, սովորաբար նույն քուրդ ընտանիքին միշտ նույն հայի տանը, պարտադրելով, որ հայը պահի ու խնամի իր հյուրին ու նրա անասուններին մինչև դարուն։ Ղշլաղի մասին որոշ տեղեկություններ են հաղորդում Գ. Սըրվանձադանցը, Բաֆֆին, Գեղամ Տեր-Կարապետյանը և ուրիշները։

Ղալ-թուրք.—ձեռք, թև, ճյուղ, շարասյուն, շոկ, խումբ և այլն⁹⁴։ Ախալքալաքի գավառի մի շարք գյուղերում, վարձակալած խոտհարքները հնձելիս բնակիչները բաժանվում էին ղուերի, այսինքն՝ խմբերի, ապա հնձած խոտը բաժանում էին խմբերի անդամների միջև։ Հավանական է, որ այդ սովորությունը եղել է դեռ թուրքական տիրապետության ժամանակաշրջանում և շարունակվել նաև ռուսական տիրապետության պայմաններում։

Ղալթի-թուրք.—կոշու բառից, որ նշանակում է պահնորդ, վերակացու, հսկիչ։ Դրանք ապրում էին հայ գյուղացիների հաշվին և ծառայում իշխանություններին ու կապալառուներին։ Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է, որ կառավարության հրահանգով գյուղաքանչյուր հայ գյուղ պարտավոր էր իր հաշվին պահել 3 թուրք կամ քուրդ աղուճիս և երաշխավորել անոնց կյանքը⁹⁵։ Իշխանությունները նրանց նշանակում էին իբր թե գյուղերը պաշտպանելու համար, բայց գործնականում՝ հայկական շարժումներին, կասկածելի անձանց հետևելու և իշխանություններին հայտնելու նպատակով։ Բենսեն գրում է, որ կապալառուն գյուղ էր մտնում տասնյակ օգնականներով, որոնք կոչվում էին խուլի⁹⁶։ Իսկ Ս. Բդեյանը նշում էր, որ գուճիները աշարի հավաքման ժամանակ շափում են հացահատիկը⁹⁷։

Ղալ կամ կալ-թուրք.—դերի, ծառա, ստրուկ, ցեղապետների կամ աղաների գործախմբերի զինվոր, բեկի մշակներ⁹⁸։

Ղալթաք-արար.—օտարություն կամ տարագնացության գնալ⁹⁹։

Ճղզլուխ-հայ.—տե՛ս ճյուղ։

Ճյուղ-հայ.—Բուլանդխում յուրաքանչյուր զյուղ արոտավայրերից օգտվելու համար բաժանվում էր 1—6 խմբերի, որոնք կոչվում էին ճյուղեր։ Ցյուրաքանչյուր ճյուղի ունեցած ոչխարների զխաքանակը չպիտի անցներ 500-ից կամ 1000-ից։ Ճյուղը կոչվում էր սովորաբար այն տնտեսության անունով, որը բոլորից շատ ոչխար ուներ։ Այս վերջինս կոչվում էր ճղզլուխ կամ քրդերեն սալջուլ։ Նրանից քիչ ոչխար ունեցող տնտեսությունները կոչվում էին քև, սրանից քիչ ունեցողները՝ թևատակ կամ քրդերեն՝ բընջուլ, ավելի քիչ ունեցողները՝ ջուլ, իսկ ամենաքիչ ունեցողները՝ պոչիկ։ Այնուհետև յուրաքանչյուր ճյուղ հանդում խփում էր իր վրանը, որը կոչվում էր գոմ։ Ձոմայի կամ Օբայի նման այնտեղ ևս ապրում էին գարնանից մինչև ուշ աշուն¹⁰⁰։

93 Տե՛ս «Բյուզանդիոն», 17 հոկտեմբերի 1908։

94 Турецко-русский словарь, с. 353.

95 Բ ու ռ ե ն. 222, հ. 4, էջ 189։

96 Տե՛ս Բ ե ն ս ե. նշվ. աշխ., էջ 144։

97 Տե՛ս Ս. և Մ. Բ դ ե յ ա ն. նշվ. աշխ., էջ 141։

98 Տե՛ս Ս ա. Մ ա լ խ ա ս յ ա ն ց. նշվ. աշխ., հ. 3, էջ 188։ «Վտակ», 1908, № 3։

99 Տե՛ս Գ ե ղ ա մ Տ ե ռ-Կ ա Ր ա պ ե տ յ ա ն. նշվ. աշխ., էջ 88—89։

100 Տե՛ս Բ ե ն ս ե. նշվ. աշխ., էջ 83—84։

Մագրաթա-արաբ. — արձանագրություն: XIX դարի վերջին և XX դարի սկզբին, որը համաշխարհային առաջագիծ հասարակայնությունը դատապարտում էր սուլթանական վայրագությունները Օսմանյան կայսրությունում, թուրքական իշխանությունները սկսեցին պատրաստել կեղծ փաստաթղթեր՝ մագրաթաներ այն սասին, որ հայ բնակչության իր վիճակից շատ գոհ է: Նրանք, բռնություններ գործադրելով, այդ փաստաթղթերի տակ ստորագրել էին տալիս հայերին և հրապարակում սամուկում կամ ուղարկում պաշտոնական շրջաններին: 1907 թ. հունիսի 6-ին Իսթիսի ռուսական հյուպատոս Վ. Շիրկովը գրում էր Կ. Պոլսի իր դեսպանին. «Համարյա ամեն օր հայկական գյուղերի ավազները բերվում են Իսթիսի կառավարչատուն և ծեծելով ու բանաբերվելով ստիպում են նրանց մագրաթաներ և մագրաթներ աշխատել, թե ծողովուրդը գոհ է իշխանություններից: Կուսակալի զապրիները այդպիսի փաստաթղթերի տեքստերով շրջում են քաղաքի շուկաներում և ստիպում են հայերին, որ ստորագրեն դրանք»¹⁰¹:

Սալիֆյան կամ Վելի-արաբ. — սուլթանի կողմից առանձին անձանց նույնիսկ հողային տարածություն՝ որպես լիակատար սեփականություն: Նա կարող էր այդ տարածությունը ժառանգել, վաճառել, նվիրել և վարձել իսկապես, ինչպես վարձում էին այլ սեփականատերեր: Այդպիսի սեփականատեր էր հանդիսանում նաև Վալիֆյան էջլեկչի, այն ապրիտություն մասկայն, որ սա պարտավոր էր արշավանքների ժամանակ դուրս բերել որոշակի քանակությամբ զորք, բայց ինքը կարող էր շահանակցել արշավանքներին¹⁰²: Սալիֆյանն սկերայվեց լիակատար շրջանում:

Սահլավ-արաբ. — ունեցվածք կամ տիրույթ, որի տերը մահացած է: Բաֆֆին գրում էր, որ «տաճկաց կառավարությունը վանքային կամ եկեղեցական կալվածք չէ ճանաչում, որովհետև կալվածատեր կարող են լինել միայն անձնավորություն ունեցող անհատներ, իսկ վանքը և եկեղեցին նրա կարծիքով իրավաբանական անձնավորություն չէ, ուրիմն և կալվածատեր լինել կարող չէ... Այս պատճառով վանքային կալվածները համարվում են որպես մահլուկ, այսինքն՝ որ-շ տեր չունեցող: Այսպիսի կալվածների տերն ինքը պետությունն է լինում»¹⁰³: Նա ապա դարմանք էր հայտնում. «Բայց չենք կարողանում հասկանալ, թե ինչու մահմեդականի մղկիթը և մագրասան կարող են կալվածք (վագրֆ) ունենալ, բայց հայոց եկեղեցին, վանքը և դպրոցը չեն կարող ունենալ»¹⁰⁴:

Սահե-ասոր. — գլխագին, փեսացուի տված գլխագինը հարսնացուին:

Սարաբա — (աղբյուրներում և հրականության մեջ հանդիպում ենք նաև մարապա, միքիպա, միրբա, մըրըբա, մըրըպա, մերաբա, մերապա և այլն գրելաձևերին): Սարաբան ծագում է արաբերեն մյուրաբա բառից, որ նշանակում է քառորդ: Տարբեր հեղինակներ տարբեր կերպ են բացատրում մարաբան: Ոմանք գտնում են, թե այն նշանակում է «գարնան օրերուն համար պայմանագրություն կնքելով գործառություն ընել»¹⁰⁵, մյուսները նշում են, որ «դրամ տվեղ և առնողը միանգամայն միրիպա կկոչվին»¹⁰⁶: Երրորդները հայտարարում են, թե մարաբան «գյուղի պրոլիտարիատն է»¹⁰⁷ և այլն: Ցավոք, մեզ անհայտ է, թե երբ է առաջացել մարաբա տերմինը և ինչ զարգացում է ապրել, բայց գիտենք, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում

¹⁰¹ Архив внешней политики России, ф. «Политархив», 1907, д. 541, л. 104—105.

¹⁰² А. С. Тверитинова. Указ. соч., с. 205.

¹⁰³ Բ ա ֆ ֆ ի. Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1964, էջ 233:

¹⁰⁴ Նույն տեղում:

¹⁰⁵ Կ ա ր ա պ և տ Ջ Ե ք ի. Մեծ բառարան օսմաներենի հայերեն. Կ. Պոլիս, 1912, էջ 776:

¹⁰⁶ Դ Ե ղ ա մ Տ Ե ր-Կ ա ր ա պ և տ յ ա ն. Հողային հարցը հայաբնակ նահանգներում մեղ-Կ. Պոլիս, 1911, էջ 29:

¹⁰⁷ Ե Ե ր Կ ի ձ ա յ ն ք, 1908, № 20, էջ 5:

մարարանների շնչող մեծամասնությունը հողագործի գյուղացիներ էին (շատ քչերը միայն ունեին հողակտորներ¹⁰⁸)։ Նրանց մի մասն ունեւր քաշող անասուններ ու գյուղատնտեսական գործիքներ, իսկ մյուս մասը ոչինչ չունեւր, ապրում էր աղաւթի կամ հողատիրոջ հատկացրած տանը և տված անասուններով ու գործիքներով մշակում։ Նրա հողը։ Աղան որքան շատ միջոցներ էր տրամադրում մարարաններին, այնքան մեծ բաժին էր ստանում հավաքած բերքից, վերցնելով իր օգտին շատ հաճախ 70—80 տոկոսը։ Հողատիրոջ և մարարանների միջև համաձայնությունը կայացվում էր սովորաբար բանավոր՝ մեկ, երկու և ավելի տարիներով։ Սակայն հողատերը մեծ մասամբ պահում էր նրանց աշխատանքը, որքան հարկ էր համարում, աշխատեցնելով նաև իր տանը։ Աղաւթի ու մարարանների մեջև ձեւավորված հարաբերությունները մի շարք սահմանում վեր էին ածվում ճորտաւորական հարաբերությունների։ Երկու մարարանների մեջ կային այնպիսիներ, որոնք բաւարարէին էին կամ ոչնչացնէին սահմանափակ ուղատաւարձու բանվորները։ Դրանց թիւը քիչ էր¹⁰⁹։

Մարարան—Ֆեոդալական տուրք, լին արհաւիր, որ գոյութիւն ունեւր ներքին Հայոց շրջանում¹¹⁰։

Մեղաւոր—աւար.—աւարդ, աւարդով վաճառք։

Մեկկուֆ կամ մեկկուֆաւարար.—հողային ունեւրվածք, որը վերցված է օրհորից՝ Դրա վրա որովա՞ որաւորաւորութիւնը չկատարուէր։ Համար։

Նիւլլ—արու.—նշված, նկատված, կասկածելի, կրկնահանցադործ (եւրոպական)։ Այդ տերմինը օգտագործվում էր զատաւորական և հետախույզական գործերում։ Ս. Բրեյսնը հուշագրում էր, որ իշխանութիւնները, երբ տեղեկութիւն են ստացել որեւէ մեկի հեղաւթական լինելու մասին, անմիջապէս շին բանաւարկել, քանի որ մի վկա է եղել, պետք է լինէր երկրորդը կամ ավելին։ Ուստի տեժամանակ նրան միմիկ են հայտարարել, այսինքն կասկածելի¹¹¹։

Միւր—արար.—տեր, իշխան։

Մյուրեղալիբե—արար.—բռնութիւնը իշխանութիւն և հարստութիւն տիրացող, զոռք¹¹²։

Մյուրեւեթիւ—արար.—հարկահաւաք։

Մյուրեւեթիւ—արար.—վազֆի կառավարիչ, նաև հայոց եկեղեցական գույքի կառավարիչ¹¹³։

Մյուրեւեթիւ կամ իլլիբեւ—արար.—Վ. Ա. Գորդլեւսկին նշում է, որ այդ տերմինը թուրքական փաստաթղթերում հանդիպում է XVI դարից և նշանակել է իր վրա որեւէ պարտականութիւն (կապալ. վերանորոգում) վերցնող մարդ, բայց հետո նա կապիտալ կուտակելով դարձել է հարկերի կապալառու¹¹⁴ և դաժան կերպով հարստահարել բնակիչներին, վերցնելով սոսանցից պետութիւն սահմանածի կրկնակին ու եռակին։ 1340 թ. մյուրեւեթիւը կամ իլլիբեւը պաշտոնապէս վերացվեց։ Սակայն 1852 թ. այն նորից է վերականգնվել։ XIX դարի վերջին և XX դարի սկզբին Արևմտյան Հայաստանում այդ կապալառուները բնակչության, հատկապէս գյուղական բնակչության կեղեքումներն ավելի սաստկացրին, մի շարք տեղերում վերցնելով գյուղացիների հավաքած բերքի 4-ից, 5-ից մեկը։

108 Տե՛ս Բ հ ն ս հ. նշվ. աշխ., էջ 40։

109 Մարարանների մասին հանգամանորեն տե՛ս Ա—Դ 0, նշվ. աշխ., էջ 276։ Ա. Ս. Համարարյան. Աղրարային հարաբերութիւնները..., էջ 70—72։

110 Տե՛ս «Աշխատանք», 1911, № 22, էջ 10։

111 Տե՛ս Ս. և Մ. Բրեյսն. նշվ. աշխ., էջ 53։

112 Տե՛ս Թուրքական աղբյուրներ..., հ. Դ, էջ 281։

113 Տե՛ս Մասնական պատմութիւն հայ մեծատուններու 1400-են—1900, գրեց Հ. Գ. Մ., Կ. Պոլիս, 1909, էջ 155։

114 Տե՛ս Ռ. Ա. Գորդլեւսկի. Указ. сош., с. 245.

Մյուս — Տե՛ս մալիֆյանն:

Մյուստերիթ-արար.— բռնակալ, ինքնակալ, Ռուբեն Տեր-Մինասյանը հուշագրում էր, որ 1907 թ. կառավարության որոշմամբ Արևմտյան Հայաստանում ռուսացիին ազատ առևտուրին հակառակողը պիտի նկատվի և հետապնդվի իբրև մյուսթիպէն¹¹⁵։ Խնդիրն այն է, որ սուլթանական իշխանությունները, հայերին դնելով ծանր վիճակում, ձգտում էին հասնել այն բանին, որ նրանք էժան վաճառեին կամ ուղղակի լքեին իրենց հողերը և հեռանային հայրենիքից։ Ովքեր խանգարում էին դրան, համարվում էին մյուստերիթներ։

Մուաշելե-արար.— այն վարձն է, որ մուծում է կապալառուն պետական գանձարան՝ աշարի վարձակալման համար։

Մուկաթա-արար.— ունեցել է բազմաթիվ նշանակություններ։ Ազրարային օրենսգրքում նրա տակ հասկացել են. 1. պետության կողմից հողից, աղահանքերից, մաքսագանձումներից և այլ օբյեկտներից ստացված եկամուտների վարձակալության տալը, 2. նշված օբյեկտներից ստացած եկամուտները կամ հարկերը, 3. առանձին շրջաններից և մարզերից հավաքված հարկերը, 4. ընդհանրապես հարկեր ու տուրքեր¹¹⁶։

Յաֆթա-պարսկ.— պիտակ, գրավոր կարգադրություն։ 1910 թ. «Բյուզանդիոնը» գրում էր, որ Բիթլիսի բնակիչները կուսակալի դռանը յաֆթա փակցրին և պահանջեցին շաշտոնադրվել արքունի պաշտոնյաներին և շնշանակել անարժաններին, այլապես կծեծվի ու կվռնդվի քաղաքից¹¹⁷։

Յուսդուլ-արար.— տե՛ս օջակըլըք։

Նախըլթա-թուրքական կառավարությունը նախըլթանտ էր համարում այն գյուղերը, որտեղից հայերին դուրս էր քշել¹¹⁸։

Նայաբնա—հավանական է քրգ. նեյառ բառից, որ նշանակում է թշնամի, հակառակորդ¹¹⁹։ «Վտակի» թշնամիցը գրում էր, որ Մշո դաշտում, երբ աղան փող է պարտք տալիս և հետո դրա դիմաց հող է ուզում, իսկ գյուղացին չի տալիս, աղան դառնում է նրա նայարնան, այսինքն՝ դուշմանը, թըշնամին¹²⁰։

Նորաշար-քրգ.— հերթապահ, ժամապահ, պահակ, պահուպան։ «Դրոշակի» լրդեակիցը նշում է, որ նորաշարները Վանի շրջակայքի հայկական գյուղերի քուրդ պահապաններն էին¹²¹։ Անգրանիկը հուշագրում էր, որ կառավարությունը հայկական գյուղերում քուրդ պահապաններ էր նշանակում, որոնք կոչվում էին նորադարներ։ Նրանց պարտականությունն է իշխանություններին հաղորդել հայդուկների գալու մասին։ Նորադարները ապրում էին գյուղացիների հաշվին¹²²։

Շախսի-վեդգիսի-արար.— թուրք.— գլխահարկ, անձնահարկ։

Շաննա-պարսկ.— 1. թագավորի կողմից նշանակված վերակացու՝ լքաղաքում կարգը պահպանելու համար, ոստիկան, 2. հարկահան պաշտոնյա, 3. թուրքիայում գյուղերի հարկերը բնատուրքով գանձող կապալառու¹²³։ Շահնան հատկապես հայկական գյուղերում դաժան հարստահարման էր ենթարկում բնակիչներին։ 1862 թ. Գ. Սրվանձտյանցը գրում էր. «Արքունի տասանորդը ստացողը (շահնա) մի նոր կերպ տեղ է գեղի մը մեջ, եկած օրեն մինչև գնացած ամեն օր եղ ու ձվածեղ, փոխինդ ու գաթա, սեր ու կարագ,

¹¹⁵ Ռուսերեն. 222, հ. 4, էջ 190։

¹¹⁶ А. С. Тверптинова. Указ. соч., с. 206—207.

¹¹⁷ Տե՛ս «Բյուզանդիոն», 1910, № 4033։

¹¹⁸ Տե՛ս «Վտակ», 1908, № 3։

¹¹⁹ Курдско-русский словарь, с. 568.

¹²⁰ Տե՛ս «Վտակ», 1908, № 3։

¹²¹ Տե՛ս «Դրոշակ», 1897, № 1, էջ 4։

¹²² Տե՛ս Ա ն դ ր ա ն ի կ. Մարտական հրահանգները. Ժընև, 1906, էջ 66—67։

¹²³ Տե՛ս Ս տ. Մ ա լ ի ս ա յ ա ն ց. Նշվ. աշխ., հ. 3, էջ 494։

խորով ու խորոված իր սևղանի վրա, իր սննեկին մեջ լիք ու պատրաստ պիտի դառնա: Ապա թե ոչ փայտը ձնոքը, դենքը վրան, այսպես հանկարծ ու համարձակ կհանդիպի, հայրությանը, սպառնալիք, հարված կթափե, մինչև ինկիս, փաթափվի ոտները, ծառա դառնաս, հող դառնաս, շուն դառնաս, հազիվ տասն միջնորդով և մեկ ոչխարով կամ ուրիշ բանով քեզ հետ հաշտվի»¹²⁴:

Շահնալըդ-սյարսկ., թուրք.—Շահնալին տբվող տուրքն էր, որ թանդիմաթի սարիններին տրչելված էր հավաքել, բայց շաբունակում էր հավաքվելու Մանենդրույուններում նշվում էր. «Շահնալըդ կամ եռչեկ հազկը բոված արգելիլ տուրք մ' ալ կա, որ բեքթին 1/6-ն է, երբեմն ալ ավելի դոր հողագործը էթի շտա, շահնալն շատ վնասներ կհասցնե անոր»¹²⁵:

Շահ-արաբ.—Արեւմտյան Հայաստանում հայերը շրիք էին անվանում այն կիսաբուշխր քրդերին, որոնք ձմեռում էին երանց գյուղերում, պատճառելով բազմաթիվ տհաժություններ և սպառնալիքներ հեղուկություններ:

Սիւլիւլ.—Ռուբին Տեր-Սինասյանի բացատրութեամբ՝ կտակ կկոչուցուն կամ վոնջին¹²⁶:

Սալուդ-թուրք.—ոնեմանտ, կեթասպա, սասնապետ, բանվորների աշխատող:

Սաշուդ-սյարսկ.—չորսից մեկը, քառորդ: «Հենում գյուղի երբեք դասակարգը, որ համարյա մի քառորդի չափ հող ունի»¹²⁷:

Սեֆը-սյարսկ.—Կուլդ: Այն հողատիրը, որը հնարավոր է մշակել մի գոյզ եղևրի միջոցով: «Սեֆը կամ Սեֆը մի հողային տարածություն էր, որը հավասար էր լավագույն տեղի համար 30 դեկտարի, միշակ տեղում 100 դեկտարի, իսկ վատ տեղում 120, 130 դեկտար հողի»¹²⁸:

Սեֆը-սյարսկ.—կալվածք:

Սեֆը.—հողագործ, լիթիլ տիր, տիրապետող:

Սորա.—Լեզի-թուրք.—քաղվորների մոտ ոչնչարի հարկ, որը համընկնում էր ողնամ ոնամիին:

Սորա.—1. Հարգված, բարեգործ, սպիտակամորուք մարդ, 2. քրիստոնյա հպատակների մեջ առևտրական և պատվավոր դասին պատկանող մարդ, 3. ենիշիրական բանակում միևնույն կաթսայից սուս (չորբա) ստացող դորքի խմբի պիա, 4. հարյուրապետի աստիճան ունեցող սպա¹²⁹:

Սաշուլ.—տե՛ս Բաշուլ:

Սեպեմե.—տե՛ս Բեպեմե:

Սանեղադ-սյարսկ.—«կյանքից ձանձրացած, կյանքից ձնոք քաշած, կյանքը մի բանի վրա դրած (մակղիր, որ կրում էին թուրք խմբերը, որոնք կոչում էին ջանֆիրայիների դիմ)»¹³⁰:

Սեպեմե-արաբ.—անասնավաճառ, սպանդանոցներին անասուն մատակարարող: Այդ առևտրականները մեծաթիվ անասուններ էին հայթայթում էրդումի, Երզնկայի և այլ քաղաքների բաստուրմայի գործարանների համար:

Սեֆիմե-արաբ.—տուգսնք, տուլժ:

Սիգե կամ ցեգե-արաբ.—զլխահարկ, շարիաթական հարկերից ամենածանրը, որը դանձվում էր ոչ մահմեդականներից և նվաստացուցիչ բնույթ ունեւր: Այն հավաքվում էր ըստ հարկատուների նյութական դրուժյան՝ շքավորները պետք է վճարեին 10, միջակները՝ 20, խսկ հարուստները՝ 30 ալլե:

124 «Արծվի վաստորական», 1862, № 3, էջ 78:

125 Ատենագրությունը ազգային ժողովուրդ, բացում 1860—1870-ամաց. Կ. Պոլիս, 1890, էջ 471:

126 Ռուբին. ՀՀ. 4, էջ 28:

127 Ստ. Մալխասյանց, Նշվ. աշխ., 4, էջ 15:

128 Օսմանյան օրենքները..., էջ 136:

129 Շե՛ս թուրքական աղբյուրները..., 4. Բ., էջ 275:

130 Ստ. Մալխասյանց, Նշվ. աշխ., 4. 3, էջ 135:

Հետագայում այդ շափերը համապատասխանաբար մեծացան, հասնելով 15, 30 և 45 ակշի¹³¹: 1856 թ. ջիզեն փոխարինվեց զինվորական հարկով՝ բեղի-ի-ասկերիով:

Ջուլ—տե՛ս Ճյուղ:

Խալա կամ ռեալա-արաբ.—(հոգնակի), ռալաթ կամ ռալիթ (եզակի)—կենդանիների հոտ: Օսմանյան կայսրության մեջ այդպես էին կոչվում այն գյուղացիները, որոնք ամրացված էին ֆեոդալի հողին և պարտավոր էին ներբան վճարել հարկեր և պետական գանձարանին՝ զինվորական տուրքեր: Մինչև XVII դարի կեսերը ռալաթներ էին կոչվում թե՛ մահմեդական և թե՛ ոչ մահմեդական գյուղացիները: XVII դարի կեսերից այդպես էին անվանվում գերազանցապես ոչ մահմեդականները¹³²: Արևմտյան Հայաստանում XIX դարում և XX դարի սկզբին ռալաթ էին կոչվում սովորաբար հայ գյուղացիները և քրդերը՝ նստակյաց մասը:

Խաշո—Ա—ԴՕ-ի մեկնաբանությամբ՝ բարերարություն: Նա գրում էր, որ Արեւելում Դարվիշ աղան հայերի վրա դրել էր նյսև ռաշո անունով տուրք, այսինքն՝ «անբերրիության տարիներում բերում էր Սոսկուն իր բարեկամ քրդերին և հայերի տներում տեղավորելուց հետո, հայերից հավաքում էր եզ, կով, ոչխար, ցորեն, գարի և այլն և տալիս այդ քրդերին իրրև ապրուստի միջոց, այսպիսով Դարվիշ աղան առնում էր քաղցած հայի ձեռքից նրա հացը և տալիս քրդին, անվանելով այդ ռաշո, այսինքն՝ բարերարություն»¹³³:

Խեկըբեռ կամ ռաեյրաբ-արաբ.—հողագործ: Այլ բացատրությամբ «օրավարձով աշխատող երկրագործական բանվոր»¹³⁴, որը ճիշտ չէ:

Խեսմ-ի աղնամ-արաբ.—հարկ ոչխարի և այծի համար:

Խեսմ-ի աբուսիյե-արաբ.—հարկ հարսնացուի համար, որը ամուսնության դեպքում ամեն մի գյուղացի վճարում էր թիմարի տիրոջը:

Խեսմ-ի ասիյաբ-արաբ.—հարկ ջրաղացի համար:

Խեսմ-ի բեգիխանե-արաբ., պարսկ.—հարկ ձիթհանի համար:

Խեսմ-ի բեհնակ-արաբ.—այն հարկն էր, որ գանձվում էր ֆեոդալի կողմից նրա թիմարին ամրակցված գյուղացիներից, որոնք ունեին կես շիֆթ հողամաս կամ բոլորովին հողագուրկ էին:

Խեսմ-ի բոստան-արաբ.—հարկ բոստանի համար:

Խեսմ-ի գիյախ-արաբ.—հարկ խոտի համար:

Խեսմ-ի դուդ-արաբ.—հարկ ծխի համար:

Խեսմ-ի կիսմետ-ի մեկվաթիս-արաբ.—հարկ ժառանգությունը բաժանելու համար:

Խեսմ-ի կըշլակ-արաբ.—հարկ ձմեռային արոտավայրերից օգտվելու համար:

Խեսմ-ի կովան-արաբ.—հարկ փեթակների համար:

Խեսմ-ի մյուշեբեդ-արաբ.—հարկ հոր հետ բնակվող աշխատողական որդիներից:

Խեսմ-ի նիկյախ-արաբ.—հարկ հարսանիքի համար:

Խեսմ-ի սաման-արաբ.—հարկ ծղոտի համար:

Խեսմ-ի քափու-արաբ.—հարկ ստացած հողաբաժնի համար, որը վճարում էր գյուղացին կառավարությանը կամ ֆեոդալին: Այդ հարկի շափը կախված էր ստացած հողի որակից: Երբ գյուղացին հողը ժառանգում էր իր հարազատներից, այդ հարկը չէր տալիս:

¹³¹ Տե՛ս Օսմանյան օրենքներ..., էջ 136—137:

¹³² А. С. Тверигова, Указ. соч., с. 210—211.

¹³³ Ա—ԴՕ. Նշվ. աղյս., էջ 367:

¹³⁴ Թուրքական աղբյուրներ..., հ. Ա, էջ 376:

ԼԻԵՍԱՄ-ի բեֆեն-արար.—հարկ տաքարի համար. որ գանձվում էր խաղողաքաղի և զինու արտադրության ժամանակ:

ԼԻԵՍԱՄ-ի շիֆթ-արար.—հողահարկ, որ վճարում էր լրիվ հողաբաժին ունեցող մահմեդական գյուղացին հողատիրոջը: Նրա չափը տարբեր շրջաններում տարբեր էր:

ԼԻԵՍԱՄ-ի շիֆթ բոգան-արար.—հարկ գյուղացուց այն հեպքում, երբ նա իր հողաբաժինը թողել է անմշակ:

ԼԻԵՍԱՄ-ի շսլսնեղի-արար.—հարկ, որ հավաքվում էր գյուղացիներից պաշտոնյայի կամ ֆեոդալի ձեռքի կերակրման համար, երբ նրանք իջևանում էին նրանց գյուղերում:

ԼԻԵՍԱՄ-ի րեզալ-արար.—հարկ կոռի փոխարեն:

ԼԻԵՍԱՄ-ի յալլա-արար.—հարկ ամառային արտադրանքների համար¹³⁵:

ԼԻԴԱՄ—Ա. Թոխմախյանը նշում է, որ «Խշու նշանակում է կամավոր տուրք»: Բայց ցավոք, չի բացահայտում, թե երբ և ինչ էր հավաքվում: Բավարարվում է սոսկ արձանագրելով, որ «Խշուն ե կողոպուտը միայն սուրբ կարապետի և Մշո վանքերումը հավաքելու սովորություն կա»¹³⁶, Դա ճիշտ չէ, կողոպուտը կար նաև այլ վայրերում:

Սալյանե-արար.—Օսմանյան կայսրության որոշ պրովինցիաներից հավաքած հարկը, որն անմիջապես մտնում էր պետական գանձարան: Նրա միայն մի մասն էր տրվում տեղական կառավարչին:

Սաբակ—ըստ Ա.—ԴՕ-ի՝ բանվոր, բայց նրա բերած տվյալներից երևում է, որ նա ազատավարձու բանվոր կամ բատրակ չէր, այլ կոռ կատարող ֆեոդալական կախյալ գյուղացի¹³⁷:

Սարջուլ—տե՛ս ճյուղ:

Սեյամլըկ-արար., թուրք.—աշխատանք, որ գյուղացիները կատարում էին պաշտոնյաների կամ հողատերերի օգտին, երբ սրանք երթևեկում էին նրանց գյուղերով:

Սեյեֆ, սըլըֆ, սալաֆ-արար.— կանխավճար: Դա վաշխառություն էր, որ տարածված էր Արևմտյան Հայաստանի բազմաթիվ շրջաններում, դրսևեզվելով զանազան ձևերով: Մի դեպքում դրամը տրվում էր տոկոսով՝ տարեկան 100 ռուբլուց մինչև 80 ռուբլի ստանալու պայմանով, մյուս դեպքում դրամատերը ձմռանն ու գարնանը պարտք էր տալիս գյուղացուն, որ աշնանը ստանար գյուղատնտեսական մթերքներ, մի այլ դեպքում վաշխառուն կարիքավոր գյուղացուն տալիս էր ոչ թե փող, այլ սերմացու՝ բերքն իր համար շահավետ կիսելու համար: Լինում էր, որ նա գյուղացուն տալիս էր թե՛ սերմացու, թե՛ հզներ (հաճախ փող՝ դրանք գնելու համար) և թե՛ գյուղատնտեսական գործիքներ, պայմանով, որ ստանար բերքի մինչև 2/3-ը: Վաշխառուն նաև գարնանը գնում էր գյուղացու ցանած արտերից մեկի երեսը, իսկ աշնանը հավաքում էր ամբողջ բերքը: Իրազեկներից մեկը նշում էր, որ եթե բերքատվությունը լիներ մեկին հինգ, վաշխառուն կստանար իր տվածի կրկնապատիկը, իսկ եթե լիներ մեկին յոթ՝ քառապատիկը և ութնապատիկը:

Վաշխառության մի այլ ձևի ժամանակ գործարքը կատարվում էր անասունների, դերազանցապես ոչխարների ու դառների վրա: Գարնանը դրամատերերը պարտք էին տալիս գյուղացիներին, իսկ աշնանը դրա դիմաց ստանում պայմանավորված քանակությամբ ոչխարներ կամ դառներ: Ամբողջ 5—6 ամսվա ընթացքում գյուղացիները պարտավոր էին ձրի պահել ու խնամել վաշխառուի անասունները և ողջ ու առողջ հանձնել նրան: Թե ինչքան էր շահում դրամատերը, կարելի է գաղափար կազմել հետևյալ փաստից. 1901 թ. Բաբեկն վարդապետը նշում էր, որ Տարոնում վաշխառուն գարնանը

¹³⁵ А. С. Тверитникова. Указ. соч., с. 211—212.

¹³⁶ Ա. Թոխմախյան. Մասիս լեռների հարավային ստորոտները. մաս Բ, Թիֆլիս, 1882, էջ 13:

¹³⁷ Տե՛ս Ա.—ԴՕ. եղվ. աշխ., էջ 301—302:

գյուղացուն տալիս էր 10 դուրուշ, իսկ աշնանը վերցնում էր 1 դառ, որը արժեքի 25—30 դուրուշ¹³⁸։ Պատահում էր, որ դրամատերը աշնանը չէր վերցնում դառը, առաջարկում էր գյուղացուն պահել ևս 8—9 ամիս։ Այդ ժամանակամիջոցում դառը դառնում էր ոչխար և արդեն արժեքի ոչ թե 25—30, այլ 50 դուրուշ¹³⁹։ Լինում էր, որ գյուղացին չէր կարողանում գրամի փոխարեն դառը տալ և պարտքը ձգձգվում էր տարիների շարունակ։

Վաշխառության տարածված ձևերից մեկն էլ կապալառությունը կամ մյուլթեղիմսությունն էր։ Վերցնելով հարկերի հավաքման իրավունքը աճուրդով, դրամատերերը գյուղացիներից հավաքում էին շատ ավելի, քան իրենք տվել էին կառավարությանը։

XX դարի ոկպին վաշխառության կառուցվածքն արդեն իր սահմանները վերցրել Արևմտյան Հայաստանի գյուղացիության մեծամասնությունը։ 1904 թ. Մեջուկը (Արտակ Դարբինյան) գրում էր, որ Վանի վիլայեթում «այս գյուղացիների մեծագույն մասը՝ մոտ 65 % -ը ներկա պայմաններում տարտնջով է ապրում»¹⁴⁰։

Սենեա-արար.—մուրհակ, ստորագրություն, ակտ, ասլադուլյը։

Սնյառ-արար.—թափառաշրջի՛, սեղաշրջվող. շարժական, շարժվող. անկայուն, արագաշարժ, շրջիկ, արշավալի, դաշտալի։ Սնյար էին կոչվում այն ղինվերները, որոնք հավաքագրվում էին համիդյան իշխանությունների կողմից հայդուկների դեմ պայքարելու համար։

Սիլա—պանդխտություն, տարագրություն։ Բ. Քեչյանը գրում էր, որ «գյուղերում բնիկը և քաղաքային բնակչության շերտերն... ապրեցնելու Ակնա բնակիչները... Այս պատճառով այդքան սիրտ կերթալին, այսինքն՝ կպանդխտեին Անատոլի մեծ քաղաքները և մանավանդ Կ. Պոլիս»¹⁴¹։ Նույն բանն էր հաստատում նաև Գ. Նրևանյանը, նշելով, թե Չարսանհակի հայ գյուղացիները սիլա էին դնում Աղանա¹⁴²։

Սիլաքի—պարսկ., թուրք.—ծիպոր, ֆեոդալական հեծյալ ավաարհազորի զինվոր, որ տիրում է լեռներին (թիմար, զեմամեր և այլն)։

Սյուվարի-արար.—տես սիպահի։

Սովորաբային հաբկեր (թեֆեֆի օյոֆիյե)—արար.—Օսմանյան կայսրության մեջ բոլոր հարկերը բաժանվում էին երկու հիմնական կարգի՝ շաֆիաթական և սովորություն։ Առաջինի մեջ մտնում են աշարը (տասանորդ), խաւաշը, ջիզիեն և զեքաթը (եկեղեցու կամ մզկիթի օգտին գանձվող հարկերը, որը կազմում էր եկամտի 1/40-ը։ Նրբեմն այն հավաքվում էր աշարի հետ)։ Նրկորդի մեջ մտնում էին այն հարկերը, որոնք նշանակվում էին սուլթանի հատուկ հրամանով՝ պետության բացառիկ կարիքների համար (պատերազմի և այլ դեպքերում)։ Այդ հարկերը, ըստ պաշտոնական հայտարարության, թեև նշանակվում էին ժամանակավորապես, բայց դառնում էին մշտական։ Դրանցից ծանր էին հատկապես ավարիզը, իմդադի-սեֆերեն, պաքսիմեթ բահան և այլն¹⁴³։

Վաքանփեթվե-արար.—հայրենասեր, Դրանք համիդյան իշխանությունների կողմից հավաքագրված մաֆդիկ էին, որոնք զուգարեն ստանալով հետապնդում էին հայդուկներին, հաշվհարդար տեսնում նրանց հետ։ Վաթանփեթվեները օգտագործում էին առիթը և թալանում խաղաղ բնակիչներին։

Վալաա կամ վեկեդ—առաջնորդ, ուղեցույց։ Սրանք ուղեկցում էին հայ զինատար խմբերին կամ շալակավորներին։ Նրանք ընտրվում էին տեղանքը լավ գիտեցող մահմեդականներից, գերազանցապես քրդերից և բարձր վար-

¹³⁸ Տե՛ս «Դրոշակ», 1901, № 1, էջ 35։

¹³⁹ Տե՛ս Մ ա լ ի ա ս. նշվ. աշխ., էջ 83։

¹⁴⁰ «Մուրճ», 1904, № 4, էջ 30։

¹⁴¹ Բ. Քեչյան. Ակն և ակնեցիք. Փարիզ, 1952, էջ 381։

¹⁴² Տե՛ս Գ. Նրևանյան. Պատմություն Չարսանհակի հայոց. Պեյրոթ, 1956, էջ 390։

¹⁴³ Տե՛ս Օսմանյան օրենքները ..., էջ 137—138։

ձաարվում: Հայդուկները սակայն խստագույնս պատժում էին նրանց, երբ դավաճանում էին: Իսկ վալատների մեջ կային այնպիսիներ, որոնք հայդուկներին կամ նրանց գրագրությունների պատճենները հանձնում էին սուլթանական պաշտոնյաներին:

Վալիֆ կամ **վալուֆ-արար**.—շաբժական և անշաբժ գույք, որի եկամուտները հատկացվում էին կրոնական կամ բարեգործական նպատակներին: Վակուֆի ունեցվածքը առաջանում էր նվիրատվություններից և զոհաբերություններից: Եկամուտների մեծ մասը ծառայում էր մահմեդական հոգևորականության օգտին, որը գնալով դառնում էր ավելի ու ավելի խոշոր հողատեր և ձեռք էր բերում մեծամեծ շաբժական ունեցվածքներ: Վակուֆը ազատ էր պետական հարկերից ու տուրքերից և պաշտպանված էր աշխարհիկ զանազան իշխանությունների ոտնձգություններից¹⁴⁴: Այն լուրջ դեր էր խաղում հրկրի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքում:

Վար-քոդ.—քոչվորական կամ կիսաքոչվորական բանակատեղ, վրան:

Վերգի-թուրք.—հարկ, տուրք:

Վրոքչիկ—Գեղամ Տեր-Կարապետյանի բացատրությունը՝ «անտաշ, գյուղացի»¹⁴⁵: Սա. Մալխասյանցը տալիս է մի շարք մեկնաբանություններ՝ «Ռըշտունիից աղավաղված: 1. Ռշտունյաց և Մոկաց գավառների բնակիչ: Ռըշտունցիների ժողովրդական անունն էր վոչիկ: 2. Մի տեսակ տրեխ՝ կանեփից և մտղից շինված: Որոշ գավառներում ուրչիկ: 3. Ընդհանրապես՝ գյուղացի, ռամիկ, շինական, տրեխավոր»¹⁴⁶:

Վիլայեթ-արար.—վալիա՝ կառավարել, բառից, Թուրքիայում վարչատերիտորիալ միավոր: Մինչև 1860-ական թվականները այդ միավորը կոչվում էր էյալեթ: 1864 թ. հրատարակվեց վիլայեթների մասին օրենք, որը գործածության մեջ դրվեց 1866 թ.: Արևմտյան Հայաստանի վարչատերիտորիայի բաժանումը կրեց մի շտրք փոփոխություններ: XIX դարի վերջին և XX դարի սկզբին այն բաժանված էր 6 վիլայեթների՝ Վանի, Բիթլիսի, էրզրումի, Խարբերդի, Դիարբեքի և Սվազի:

Տամդու-թուրք.—շուկայի մաքսատեսակներից մեկը:

Ուշաբ—տե՛ս աշար:

Ուշուրջու-արար, **թուրք**.—աշար հավաքող:

Փերեզակ-պարսկ.—մանրավաճառ:

Փոլոս—XIX դարի I կեսին գյուղացիները գնում էին Կ. Պոլիս աշխատելու: Նրանք պարտք էին վերցնում 25—1000 դուրուշ, վճարելով 20 տոկոս: «Սա կոչվում էր փոլոս և մաս-մաս ուղարկում էին Կ. Պոլսից»¹⁴⁷:

Քալֆա-արար.—փոխանորդ, օգնական, ենթավարպետ, քարտուղար:

Քեթլսուղա-արար.—քեհյան բառից, որ նշանակում է տանուտեր, հիմ-

¹⁴⁴ А. С. Тверитинова. Указ. соч., с. 197.

¹⁴⁵ Գեղամ Տեր-Կարապետյան. Տարոնի աշխարհ, էջ 338:

¹⁴⁶ Ստ. Մալխասյանց. Նշվ. աշխ., հ. 4, էջ 353:

¹⁴⁷ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1974, № 3, էջ 90:

նարկի կամ վարչության գործավար¹⁴⁸, այլ մեկնաբանությամբ՝ զինվորական և քաղաքացիական կոչում¹⁴⁹:

Քյաթիր-արաբ.—գրագիր, քարտուշար, գրիչ, գիր անող, գործավար:

Քյաթիր-արաբ.—անհավատ, ոչ մահմեդական, գործածվում է արհամարհական իմաստով: Սովորական լինում էր հայկում: Վասպուրականում հայերը դրա տակ հասկանում էին սրիկա, խաբեբա, խարդախ և դժբաժնում էին իրար հանդեպ: Իսկ երբ ուղում էին անվանարկել թուրքերին ասում էին քյաթիր բռն, այսինքն՝ անիծյալ թուրք¹⁵⁰:

Քանքաբ-լատ.—կոնտակտ, շփում, սերտ հարաբերություն, կապ, շրփման կետ, փոխադարձ համաձայնեցվածություն, մեկի հետ հարաբերության մեջ մտնել, սերտ շփում, առնչություն ունենալ: Արևմտյան Հայաստանի որոշ շրջաններում, հատկապես Տարոնում, տարածված էր այդ տեսակի: Մյուսք Քանյանը հուշագրում էր, որ Մշո դաշտում կար հատուկ պաշտոնյա, սր կոչվում էր քոնքաբ: Նա զինվորների համար ուտելիք, հագուստ և վառելիք էր հաշվում: Հաճախ քուրդ ցեղապետերը իրենք էին տալիս նրան այդ ամենը, վերջում համարվում էին փաստաթուղթ, իսկ հետո դանձում գյուղացիներից կրկնակին ու եռակին¹⁵¹:

Քաշաբ-քուրդ.—քոչվոր:

Քուսին—տե՛ս կառ:

Օրա-բուրխ, քուրդ.—մեծ վրան, ժամանակավոր բնակություն մի տեղում, ուր ապրում են վրանների տակ, գյուղական քոչվորական համայնք, ընդգրկում է 10—20 ընտանիք¹⁵²:

Օրաբաշի թուրք.—քոչվորական համայնքի պետ, մեծ վրանի տեր:

Օրալ-թուրք.—ամառային արոտավայր:

Օրալ-ռեսուի-թուրք., արաբ.—ամառային արոտավայրերից օգտվելու հարկ, որ գանձվում է հողատիրոջ օգտին:

Օլամ-արաբ., թուրք.—կոռ, աշխատավճար, պարհակ: Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններում աղաները ստիպում էին իրենց իշխանության տակ ընկած գյուղացիներին օլամ անել, այսինքն՝ ձրի վարել ու ցանել աղալի արտերը, տեղափոխել բերքը, կալսել ու ամբարել այն և այլն: Աղալի մարդիկ, թվով 10—12 ձիավոր, գցում էին գյուղացիներին ձիերի առաջ, զրույց աշխատելու, հարկադրում էին նրանց բանել վաղ առավոտից մինչև ուշ երեկո, հաճախ թույլ չտալով անգամ ճաշել¹⁵³:

Օլախ—հազգ—շափելու վարձ, որը ստանում էին գյուղացիներից կապալառուների մարդիկ, երբ շափում էին տասանորդի տուրքը: XIX դարի կեսերին դա պաշտոնապես արգելված էր, բայց կապալառուները շարունակում էին գանձել¹⁵⁴:

¹⁴⁸ Տե՛ս Թուրքական աղբյուրներ ..., հ. Ա, էջ 381:

¹⁴⁹ А. С. Тверктянова, Указ. соч., с. 203:

¹⁵⁰ Տե՛ս Վահան Փափազյան. Իմ հուշերը. հ. Ա, Բոստոն, 1950, էջ 208:

¹⁵¹ Տե՛ս Ս. և Ս. Բախյան. նշվ. աշխ., էջ 238:

¹⁵² Күрдско-русский словарь, с. 518:

¹⁵³ Տե՛ս Դիվան հալոց պատմության, հ. ԺԳ, էջ 91:

¹⁵⁴ Տե՛ս Րաֆֆի. Երկերի ժողովածու. հ. 9, էջ 223:

Օջակլըբ-թուրք.—Ֆեոդալական ժառանգական հողատիրություն, որը գտնվում էր բոլշևորական ցեղերի ղինվորական պետերի տրամադրության տակ՝ սուլթանին ծառայելու և ենթարկվելու համար։ Օջակլըբները դառնում էին սանջակների վիճակում, օգտվում էին վարչական անկախությունից, իսկ սանջակների ժամանակ նրանց տերերը պարտավոր էին մասնակցել իրենց ղորքերում և ենթարկվել բելլերբեյին։ Օջակլըբները չէին կարող խլվել կամ վերցվել նրանց տերերից։ Նրանք անցնում էին ժառանգաբար, սերունդից սերունդ։ Թուրք պատմաբան Ի. Հ. Ուղունչարդը նշում է, որ Արևելյան Անատոլիայում կալին մի շարք սանջակներ, որոնք շունեին թիմարներ և զխամթներ. կառավարությունը այդ սանջակները հանձնել էր իրենց նախնիներին՝ իշրե սեփականություն։ Դրանք ստացողները ճանաչում էին օսմանյան պետության գերիշխանությունը և հարկ կապ ղեկավարում կատարում էին ղինվորական ծառայություն։ Այդ սանջակները ժառանգական կարգով անցնում էին բելլի որդուն, հղբորը կամ մոտիկ ազգականներին¹⁵⁵։

Օրբակ կամ օրբակլի-թուրք.—ընկերակից, ընկեր, մասնակից, փայտաբու։ Սրանք սակավահող կամ հողազուրկ գյուղացիներ էին, որոնք մշակում էին ֆեոդալի հողը կիսարարությամբ։ Ա.—ԴՕ-ն գրում էր, որ էրզրումի գավառում գյուղացիների հետ մասը մարաբաներ են։ Նրանք աղայի սերմով տղայի հողը մշակում են և բերքի կեսը աղային տալիս, այս այն դեպքում, երբ լծկանն ու դործիքը գյուղացուն են. հողային հարաբերության այս ձևը կոչվում է «օրթակլություն»¹⁵⁶։

Օրման-ոսմի-թուրք., արաբ.—անտառի տուրք։

Ֆեստա—համանական է արաբական ֆեսա տ բառից, որ նշանակում է փառաբանություն, անկարգություն, խռովություն, սադրանք։ Վ. Փափաղյանը հուշագրում է, որ Վանում և Վասպուրականում դաշնակցականներին ու հայդուկներին անվանում էին ֆեստա կոմիտաճի, այսինքն՝ խռովարար կոմիտայի¹⁵⁷։

Ֆեթլա-արաբ.—շարիաթի հիման վրա մահմեդական հոգևորականի (մուֆթիի կամ կադիի) արձակած որոշումը։

Ֆերադ-արաբ.—1. աշխատանքի դադարեցում, բանժող, գործից հրաժարվել, 2. հանգիստ, 3. Օտարում, վաճառում¹⁵⁸։

Կերվան-պարսկ—սուլթանական հրամանագիր։

Ֆիրաբ-արաբ.—փախստական, տարագիր, դասալիք։ Դրանք օսմանյան իշխանությունների ու աղաների հալածանքներից փախած մարդիկ էին, որոնց մի մասը ամրանալով հարազատ սարերում ու լեռներում, դառնում էին հայդուկներ և վրեժխնդիր լինում իրենց թշնամիներից։ Այդ փախստականների թիվը Արևմտյան Հայաստանում մեծացավ հատկապես 1890-ական թթ. կոտորածներից հետո¹⁵⁹, 1908 թ. հեղաշրջումից հետո երիտթուրքական իշխա-

¹⁵⁵ Թուրքական ազբյուրները..., հ. Բ, էջ 289։

¹⁵⁶ Ա.—ԴՕ. նշվ. աշխ., էջ 169։

¹⁵⁷ Տե՛ս Վ ա հ ա ն Փ ա փ ա ղ ա ն. նշվ. աշխ., էջ 156, 308։

¹⁵⁸ Турецко-русский словарь, с. 188.

¹⁵⁹ Տե՛ս 22 ԿՊՊԱ, ֆ. 412, ց. 1, գ. 1979, ք. 5—6։ Մ. և Ս. Բ գ ե յ ա ն. նշվ. աշխ., էջ 221։

նությունները հեզնաբար ֆիրար էին տնվանում քրդական այն աղաներին, որոնք, վախենալով այդ հեղաշրջումից, անցել էին Պարսկաստան¹⁶⁰։

Ֆլլան արար.—Ֆելլահ բառից, որ նշանակում է երկրագործ, գյուղացի։ Քուրդ ցեղապետերն ու աղաները իրենց հպատակ հայ գյուղացիներին անվանում էին ֆլլահ։

Ֆուղարա—արար.—Ֆրկարա բառից, որ նշանակում է չքավոր, կարիքավոր։ Ռուբեն Տեր-Մինասյանը գրում է, որ Ղարսա Մոսոն հայդուկ Կորյունին ասում էր. «Դու հարուստի ժառանգ, մենք ֆուղարա ենք»¹⁶¹։

Սոցիալական տերմինները, առաջանալով պատմական տարբեր ժամանակներում և արտահայտելով հասարակական որոշակի հարաբերություններ, վկայում են, որ Արևմտյան Հայաստանում գերիշխում էր արտադրության ֆեոդալական եղանակը, նահապետական հարաբերությունները արդեն անցյալի մնացուկներ էին, իսկ կապիտալիզմի ձևերը նոր էին հայտնվում։

Այդ տերմինների բացահայտումը ցույց է տալիս, որ անմիջական արտադրողները, հատկապես հայ գյուղացիները, գտնվում էին անասնի ժանրի վիճակում։ Աշխարհում քիչ կարելի էր գտնել այնպիսի անկյուն, ուր տիրակալները այնպես դաժան վարվեին իրենց հպատակների հետ և այնպես վայրագաբար ոտնահարեին նրանց մարդկային ու ազգային իրավունքները և արժանապատվությունը, ինչպես Արևմտյան Հայաստանում։

160 Տե՛ս Վրաստանի Հանրապետության ԿԳՊԱ, ֆ. 521, ց. 2, գ. 492, ք. 196։

161 Ռուբեն. 222, հ. 5, էջ 55։